Հավելված N 7
2025 թվականի հունվարի 21-ին կնքված
N «ԴՏՊ-1160-11012/ԳՄ-7/25» պայմանագրի

Ծրագրի եռամսյակային հաշվետվություն

Միջոցառման անվանումը՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում»

Համառոտ բովանդակությունը՝ Խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցում Վարդենիսի տարածաշրջանի համայնքներում ապրող հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային կենտրոնում

Հաշվետու ժամանակաշրջան՝ *2025թ. երրորդ եռամսյակ*

| Իրականացված գործողություններ | Ակնկալվող արդյունքները | Գնահատման չափանիշները և հիմնավորող փաստաթղթեր | Փաստացի մատուցած ծառայություններ | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|
| -Ըստ շահառուների կարիքների գնահատման, աշխատանքների պլանավորման, ժամանակացույցի շարունակվել են բոլոր աշխատանքները: Ըստ կարիքների գնահատման արդյունքների կատարվել են նաև որոշակի փոփոխություններ անհատական և խմբակային պարապմունքներում: Շահառուների անվտանգությանը և ինքնազգացողությանը անընդհատ հետևում են պատասխանատուներն ու բուժքույրը:<br>- Յուրաքանչյուր մասնագետ և խմբակավար իր կատարած աշխատանքների և արդյունքների մասին գրառումներ է կատարել հաշվետվություններում:<br>**Կազմակերպվել է ճանաչողական էքսկուրսիա Գեղարքունիքի մարզի Մաղինա համայնքի Ներսես Կարապետյանի անվան տուն թանգարանում: Մասնակցել են սպորտային** | Շահառուների 80%-ի մոտ նկատվել է շոշափելի դրական արդյունքներ:<br>Բարելավվել են ինտելեկտուալ ունակությունները և մասնագիտական հմտությունները: | Ծառայություններ մատուցողների և խմբակավարների դիտարկված փոփոխությունների գրառումների հաշվետվություններ:<br>Հարցումներ ընտանիքների անդամներից:<br>Համեմատություններ շահառուի սկզբնական և առկա վիճակի միջև:<br>Յուրաքանչյուր աշխատակցի ամսվա վերջում հաշվետվության ներկայացումներից՝ | Տրամադրվել են սոց աշխատողի, հոգեբանի, հատուկ մանկավարժի ծառայություններ:<br>Շահառուները մասնակցել են կարպետագործության, ջուլհագործության, գոբելենագործության, փայտամշակման, կար ու ձևի, համակարգչային հմտությունների տիրապետման խմբակների պարապմունքներին և ձեռք են բերել մասնագիտական որոշակի հմտություններ:<br>Բուժքրոջ կողմից նրանց սովորեցրել է նաև ինքնախնամքի, իր մարմնի | Ծրագիրը շատ կարևոր է և դրական փոփոխություններ են արձանագրվել շահառուների առօրյա կյանքում: Ընտանիքների հավաստմամբ և մեր դիտարկումներով նրանք անկաշկանդ շփվում են շրջապատի մարդկանց հետ, կարողանում են ինքնուրույն զբաղվել ինքնախնամքով, օգնում են տնտեսական գործերում: Շահառուները հաճույքով են այցելում Կենտրոն, որտեղ իրենց ազատ ու անկաշկանդ են զգում, մասնակցում են բոլոր պարապմունքներին, ձեռք են |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | մրցույթների և ժամանցային խաղերի: Մասնակցել են նաև ամառային ճամբարին: | | կատարված աշխատանքների և շահառուի մոտ եղած փոփոխությունների մասին: | և շրջապատի մաքրության, հիգենայի, առողջ սննդի և ապրելակերպի կանոնները: | բերել ընկերներ և հասարակության մեջ ինքնադրսևորման հմտություններ: |
| Ընդամենը շահառուներ՝ 22 Շահառուները Վարդենիս քաղաքում և հարակից համայնքներում ապրող 18 + հաշմանդամություն ունեցող անձինք են: | | | | | |
| Ազդեցությունը՝ շահառուների մոտ կան նկատելի դրական փոփոխություններ մեծացել է շփման միջավայրը, որտեղ նրանք հանդիպում են տարբեր խառնվածք ունեցող մարդկանց: Շահառուներն ձեռք են բերել չկաշկանդվելու, հաղորդակցվելու, ընկերանալու հմտություններ: Նրանք արդեն բավականին ակտիվ են, չեն խուսափում հանրային վայրերից: Շահառուները մասնակցելով խմբակների պարապմունքներին ձեռք են բերել իրենց նախասիրություններին համապատասխան մասնագիտական հմտություններ, որոնք օգտագործում են իրենց առօրյա գործողություններում, զարգացել է ստեղծագործական միտքը և դիզայներական ճաշակը: | | | | | |

Կազմակերպությունը երկար տարիներ աշխատում է հաշմանդամություն ունեցող անձանց հետ, նրանցից ոմանք նախորդ տարիներին ընդգրկված են եղել ծրագրում, մնացած մասնակիցները՝ Վարդենիսի ՄՄԾ-ի միջոցով։

*Նախարարություն՝*

*Նախարարության գլխավոր քարտուղարի փոխարինող՝*

*Վ .Տեր-Բայյան*

--------------------------------

*/ստորագրություն/*

*Կ.Տ.*

*Կազմակերպություն՝*

*Նախագահ՝ Ա.Եփրեմյան*

--------------------------------

*/ստորագրություն/*

*Կ.Տ.*

08413732

Հասարակական կազմակերպություն

Общественная Организация

Non-Governmental Organization